«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի ձյուդոյի և կարատեի դահլիճի վերանորոգման ծրագրի» դրամաշնորհային պայմանագրի ստորագրման արարողություն

2022 թ. մարտի 14-ին ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունում տեղի ունեցավ 91,088 ԱՄՆ դոլար արժողությամբ «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի ձյուդոյի և կարատեի դահլիճի վերանորոգման ծրագրի» դրամաշնորհային պայմանագրի ստորագրման արարողությունը՝ Ճապոնիայի կառավարության «Grassroots» մշակութային ծրագրերի համար դրամաշնորհային աջակցության շրջանակում: Դրամաշնորհային պայմանագիրը ստորագրվեց ՀՀ-ում Ճապոնիայի դեսպան պարոն Մասանորի Ֆուկուշիմայի և Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի ռեկտոր պարոն Դավիթ Խիթարյանի միջև: Արարողությանը ներկա էր նաև ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ պարոն Կարեն Գիլոյանը:

Ծրագրի նպատակն է կառուցել և վերազինել ձյուդոյի և կարատեի ներկայիս դահլիճը, ներառյալ երկու հանդերձարանները՝ ցնցուղներով, և պահեստային տարածքը: Վերակառուցումից և վերանորոգումից հետո դահլիճի տարածքը կմեծանա և ավելի քան 700 մարդ հնարավորություն կունենա մարզվել ձյուդոյի և կարատեի դահլիճում՝ բարելավված պայմաններում:

Դեսպան Ֆուկուշիմայի ելույթը

Նախարարի տեղակալ պարոն Գիլոյանի ելույթը

Դրամաշնորհային պայմանագրի փոխանակումը դեսպան Ֆուկուսիմայի և ռեկտոր Խիթարյանի միջև

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունում ստորագրման արարողությունը